ԱՄՊՈՒԳՈԼ, մ.հ., ամպոտ ու տաք օր, խոնաւ տաքութիւն:

ԱՄՊՐԱՒ, ամրաւ, մ. հ. , արմաւ:

ԱՄՐ, ա. էմր, հրաման:

ԱՅԱ, Ա. բ., միշտ (Ճանիկեան):

ԱՅՆՈՔ, մ. հ., անոնք:

ԱՅՏՈՅ, մ. հ. անոր համար, այն պատճառով:

ԱՆԱՀՈՒՆ, ԱՆԻՀՈՒՆ, մ. հ., անհուն:

ԱՆԴԵՀ, մ. հ. , այն կողմ:

ԱՆԴԷՃ ԼԻՆԵԼ, դասական հայերէն՝ անդաճել. պ. էնտաջէ, խոր մտածել, խոկալ:

ԱՆԴԷՆ, ԱՆԴԵՆ, մ. հ. անդիի աշխարհ, հանդերձեալ կեանք:

ԱՆԴԻՃԵԼ, տես ԱՆԴԷՃ ԼԻՆԵԼ:

ԱՆԴԻՇԱՅ, մ.հ. պ. էնտիշէ, մտատանջ, մտահով, մտատանջութիւն:

ԱՆԴԻՇԷՆԷՍ, այս մտահոգութենէս:

ԱՆԵՂ, մ. հ., մեծ աղեղ:

ԱՆՁԵՆԵՀԱՐ, մ. հ. տես ՁԵՆԵՀԱՐ:

ԱՆԽԸՏԱՐ, Ա. բ., այնչափ. ա. քատար, քուտրէթ, չափ կարողութիւն:

ԱՆՁԿԱՆՑ, մ. հ. մարմին, սրունգներ, իր ճոհար անձկանց ի վերայ:

ԱՆՄԱՏԱԹ, մ. հ. , անօգնական. ա. մէտէթ, օգնութիւն:

ԱՆՉԱՔ, մ. հ. , այնչափ:

ԱՆՏԻՇԱՅ, ԱՆՏԻՇԷՆԷՍ, տես ԱՆԴԻՇԱՅ, ԱՆԴԻՇԷՆԷՍ:

ԱՆՑԳՈՅ, մ. հ. այնպիսի:

ԱՆՑԳՈՒՆ, մ. հ. , տես ԱՆՑԳՈՆ:

ԱՇԸԽ, Ա. բ., աշուղ, ժողովրդական երգիչ. ա. աշրք, սիրահար:

ԱՇԽԱՐԱ, պ. աշիքեար, բացայայտ, որոշ, բացէ ի բաց:

ԱՉԸՐԵԼ, մ. հ. խոցել, ցաւցնել:

ԱՉԻՉ, մ. հ. քո աչիչդ (աչիցդ), աչքերուդ, հազար աչիչ հաւընած, հազար աչքէ հաւնուած:

ԱՊԻԿԻ, մ. հ. ապակի, բիւրեղ. բիւրեղէ գաւաթ:

ԱՊԼԱՀ, տ. տկարամիտ, ապուշ:

ԱՊՈՎ, մ. հ. տես եւ յապով, ապաւինած, յոյե դնելով. քանի՛ կենամ քեզ ապով. այն տախտակն յապով կու կենայ:

ԱՊՐՈՒՇՈՒՄ, ապրշում, ապրշըմէ, ապուշում, ափրշում, ապրիշում, ապրշըմ, ապիրշում, պ. էպրիյշիւմ, մետաքս:

ԱՌՈՒԴԻՐ (անել) մ. հ. , ոտքը յառաջացնել ու ետ քաշել:

ԱՌՈՒՓԱԽ (անել) մ. հ., առեւանգել: